ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն՝ Անահիտ Կյուրեղյան

«31» Օգոստոս 2022թ.

Կ.Տ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Լոռու մարզ. Գյուղ Շենավան

VII-րդ դասարանի դասղեկ՝

Կարապետյան Թերեզա Ստյոպայի

«2022- 2023» ուսումնական տարի

Մեր դասարանի բարոյական նորմերը

- ✓ Օբյեկտիվ լինել իր անձի և ուրիշների նկատմամբ
- ✓ Ազնվորեն ընդունել սխալները
- ✓ Կարողանալ լսել, հավատալ և հետևություններ անել
- ✓ Հոգատար լինել դիմացինի նկատմամբ
- ✓ Հանդուրժող լինել միմյանց նկատմամբ

ԴԱՍԱՐԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Յոթերորդ դասարանում սովորում են 3 աշակերտ՝ 2 տղա և 1 աղջիկ: Բոլորն էլ օժտված են ֆիզիկական և մտավոր բավարար կարողություններով: Դասարանի գերակշիռը մասը մեծ սեր ու հետաքրքրվածություն ունի ուսման հանդեպ: Դասարանը շատ աշխույժ է: Մեր դասարանի ակտիվության շնորհիվ հնարավոր է դասղեկական աշխատանքները կազմակերպել լիարժեք, հաճախակի հրավիրել ծնողական ժողովներ, ցերեկույթներ և նման միջոցառումներ, ինչը նպաստում է աշակերտների համախմբվածությանը:
Այնուամենայնիվ դասարանի հետ կաշխատեմ այնպես, որ դասերի ընթացքում երեխաները ոչ միայն գիտելիք ձեռք բերեն, այլև փնտրեն, գտնեն մտածական գործունեության հնարքներ, հմտանան դրանք ձեռք բերելու եղանակների միջև:
Տարվա ընթացքում կապահովեմ, դպրոցի և ծնողի համաձայնեցված աշխատանքը՝ երեխաների ուսման և դաստիարակության գործում:
Ինչպես նաև կհամագործակցեմ դասավանդող մյուս ուսուցիչների և տնօրինության հետ:
Անհրաժեշտության դեպքում աշակերտների հետ պետք է ունենալ անհատական մոտեցմամբ առանձնազրույցներ:



ԿՐԹԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հիմք ընդունելով դպրոցի տարեկան ուսումնադաստիարակչական պլանի և ըստ յոթերորդ դասարանի դասղեկի կազմած դաստիարակչական աշխատանքների պլանի կազմակերպել արդյունավետ ուսուցում և դաստիարակություն՝ այնպես, որ սովորողները ձեռք բերեն իրենց կարողություններին համապատասխան գիտելիքներ և հմտություններ: Հենվելով իրենց գիտելիքների ու սեփական փորձի վրա կարողանան ազատ և անկաշկանդ դրսևորել սոցիալական և այլ միջավայրերում: Կազմակերպել զրույցներ տարբեր թեմաներով, որպիսի ձևավորվի ճիշտ աշխարհայացք և անհատականություն, լիիրավ քաղաքացի. վերջինս կատարելով իր պարտականությունները և պաշտպանել իր իրավունքները:

ՀՈԳԵՎՈՐ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Զրույցների միջոցով զերծ պահել երեխաներին աղանդներից, վերագնահատել մեր հոգևոր արժեքները:Հոգևոր դաստիարակությունը՝ հույս, ուժ, բարություն, ձգտում, կյանքի իմաստավորում և արժևորում փոխանցող ուժ է: Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք քրիստոնեության նկատմամբ, այդ նպատակով կատարել պատմական ակնարկ, որը կնպաստի հոգևոր դաստիարակության ձևավորմանը: Անդրադառնալով եկեղեցական բոլոր տոներին, ճանաչել տալ դրանց խորհուրդը, այցելել եկեղեցիներ: Իսկական հայորդի ձևավորելու նպատակով՝ աշակերտներին ծանոթացնել հայրենիքի պատմամշակույթային կոթողներին, թանգարաններին: Դասարանում ստեղծել այնպիսի մթնոլորտ, որ աշակերտն իրեն զգա դպրոցի, դասարանի լիարժեք անդամ, հարգի և սիրի մերձավորներին: Երեխան պետք է լինի հանդուրժող, կարողանա լսել դիմացինի կարծիքը և հարգի այն, եթե նույնիսկ չի ընդունում: Յուրաքանչյուրը պետք է ունենա իր «ես»-ը, իր սեփական դիրքորոշումը:

ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Գեղեցկության ըմբռնումը, իմաստավորումը գեղագիտական կրթության հիմքն է, առանցքը՝ գեղեցիկի ընկալումից և ճանաչումից է սկսվում գեղագիտական մշակույթի դաստիարակումը, զգացմունքների դաստիարակությունը, որը յուրաքանչյուրի համար կյանք մտնելու և այն ճիշտ անցնելու արժեքն է: Այն կարևորագույն արժեքն է, գեղեցիկի, բարու և ճշմարտության գնահատման մասին: Աշակերտի մեջ պետք է կաթիլ-կաթիլ ավելացնել գեղեցիկը տեսնելու և գնահատելու կարողությունը: Որքա՞ն հնարավոր է, զերծ պահել ժամանակակից արվեստում առկա անճաշակությունից և լեզվական աղավաղումներից: Ծանոթացնել արվեստի ու գրականության լավագույն գործերին, զարգացնել զարգացնել գեղագիտական ճաշակ:

ՌԱԶՄԱ-ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Մատաղ սերնդի հայրենասիրական դաստիարակությունը մշտապես գտնվել է ժամանակակից դպրոցի ուշադրության կենտրոնում, քանի որ մանկությունն ու պատանեկությունը ամենանպաստավոր շրջանն է անձի մոտ հայրենիքի նկատմամբ իր պատկերացումները ճիշտ ձևավորելու, սիրո զգացմունքն արմատավորելու և որպես հայրենիքի պաշտպանի գիտակցումը սերմանելու համար: Հասկանալի և համոզիչ ձևով աշակերտներին հասկացնել, թե որքան կարևոր է մեր փոքրիկ հայրենիքի պաշտպանությունը: Բազմադարյան անթիվ հերոսական հաղթանակների, անհամար հերոսների անձնական օրինակներով ձևավորել հայրենասիրություն, ձևավորել անձ և քաղաքացի, ով կհարգի Հայաստանի պետական խորհրդանիշերը,կ լինի հայրենասեր, կկարևորի ազգային հիմնախնդիրների լուծման գործում իր մասնակցության անհրաժեշտությունը: Սերմանել սեր և հարգանք հայրենիքի, ակնածանք ֆիդայիների և հայ ազատամարտիկների նկատմամբ: Բնավորության մեջ ձևավորել հայրենասիրություն և ռազմարվեստ: Հայերը իրավունք չունեն ուժեղ չլինել, որովհետև թույլերին խղճում են, իսկ ուժեղների հետ՝ հաշվի նստում:

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Ֆիզիկական դաստիարակությունը անձնավորության համակողմանի և ներդաշնակ զարգացման կարևոր բաղադրիչ է: Որի նպատակն է՝ ժամանակին ձևավորել երեխաների շարժողական կարողություններն ու հմտությունները, զարգացնել հետաքրքրություն՝ երեխային մատչելի շարժողական գործունեության զանազան ձևերի նկատմամբ, դաստիարակել անձի բարոյակամային հատկանիշներ՝ ինքնուրույնության, ակտիվության, մարդկային փոխհարաբերության կուլտուրայի դաստիարակում: Ֆիզիկական զարգացմանն ուղղված պայմանների ստեղծում, վնասակար սովորությունների հանդեպ բացասական վերաբերմունքի ձևավորում: Երեխան պետք է գիտակցի, որ հարկավոր է մշտապես հոգ տանել առողջության մասին, կարևորի մարմնակրթության դերը, հետևողական լինի առողջ ապրելակերպի և անվտանգ կենսագործունեության կանոնների կիրառման գործում: Ֆիզիկական դաստիարակության խնդիրն է ամրապնդել երեխայի առողջությունը, նրան դարձնել կենսուրախ, հոգեպես և ֆիզիկապես ներդաշնակ զարգացած մարդ:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Ուսման ընթացքում աշխատանքային դաստիարակությունը ծառայում է աշակերտների համակողմանի զարգացմանը: Աշակերտների մոտ ձևավորում է՝ աշխատասիրություն, պատասխանատվության զգացում, խթանում է աշխատանքային հմտություններ և կառուցողական վերաբերմունք, կապում հանրօգուտ աշխատանքի հետ:Երեխան պետք է զգա, որ առանց աշխատանքի հնարավոր չէ ապրել,որ աշխատանքն է պարգևում հոգևոր կյանքի ուրախությունը, լիակատարությունը: Եթե սովորելիս մարզվում է ուղեղը, ապա աշխատելիս կոփվում է մարմինը՝ ապահովելով երեխայի ներդաշնակ աճը:

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Այն ձևավորում է բնության հանդեպ հոգատար վերաբերմունք և սևեռում աշակերտի խնամքն ու ուշադրությունը բնության պահպանման գործին: Երեխան պետք է գիտակցի, որ ոչ մի բան անսպառ չէ: Բնությունը պատժում է նրանց, ովքե՞ր ճիշտ չեն օգտվում դրանից: Պետք է արդյունավետ և խնայողաբար օգտագործել բնական հարստությունները, առանց դրանց մարդկությունը չի կարող գոյատևել: Ժամանակ առ ժամանակ կազմակերպել շրջակա միջավայրի մաքրում:

ԴՊՐՈՑ-ԸՆՏԱՆԻՔ ԿԱՊԸ

Դպրոցը և ընտանիքը լուծում են միևնույն կարևոր խնդիրը՝ մատաղ սերնդի ուսման և դաստիարակության գործը: Դպրոցը երեխային տալիս է գիտական գիտելիքներ և իրականության նկատմամբ դաստիարակում գիտակցական վերաբերմունք: Ընտանիքն էլ իր հերթին ապահովում է կյանքի պրակտիկ փորձը: Ընտաիքում ձևավորվում և մշակվում են մարդկանց կարեկցելու կարողությունը: Անձի ներդաշնակ զարգացման համար այս երկու որակներն էլ խիստ անհրաժեշտ են, ուստի այս երկու օղակների աշխատանքը պետք է լինի փոխկապակցված և փոխհամաձայնեցված: Մշտապես կապ հաստատել ծնողների հետ, նրանց ներգրավել ինչպես դասարանական, այնպես էլ արտադպրոցական միջոցառումներին: Բացահայտել աշակերտների կեցությանը, նրանց առողջական վիճակին վերաբերող հարցերը: Ծանոթանալ նրանց սոցիալական պայմաններին: Մշտական կապի մեջ լինել ծնողական խորհրդի անդամների հետ:

	Ինչպես դեղորայքը չի ծառայում նպատակին, եթե չափաբաժինը չափից շատ է, այնպես էլ խրախուսումն ու քննադատումը՝ երբ անցնում են արդարության չափը: ***Ա.Շոպենհաուեր*** **Ամենակարևոր երևույթը դպրոցում, ամենաուսուցանող առարկան, ամենալավ կենդանի օրինակը. այս ամենն ամբողջանում է ուսուցիչների մեջ:** ***Ադոլֆ Դիստերվեգ***
	Հարկավոր են խելացի, կրթված մարդիկ: Լավագույն կյանքին մարդկության մոտենալուն համեմատ այդ մարդկանց թիվը կմեծանա, մինչև որ նրանք կազմեն մեծամասնություն: ***Ա. Պ. Չեխով***
	Յուրաքանչյուր ոք, ո՞վ հիշում է իր կրթությունը, հիշում է ուսուցիչներին, ոչ թե մեթոդները և՛ տեխնիկան: Ուսուցիչը կրթական համակարգի սիրտն է: **Սիդնի Հուք**
	Մարդկանց իմաստնությունը համեմատական է ոչ թե նրանց փորձին, այլ այն ձեռք բերելու նրանց ընդունակությանը: **Բերնարդ Շոու**
	Իմաստունը նա չէ, ո՞վ շատ գիտի, այլ նա ում գիտելիքներն օգտակար են: **Էսքիլես**

Դասղեկի գործունեության ոլորտները	սեպտեմբեր	հոկտեմբեր
1.Կազմակերպչական աշխատանք	Աշխատանքային պլանի կազմում: Դասարանի ակտիվի ընտրություն: Դասարանում հերթապահության կազմում: Դասարանական անկյան ձավորում: Ծանոթացում դպրոցի տարհանման պլանին: Օգնել աշակերտներին արտադասարանական խմբակներում ընդգրկվելուն:	Դասարանում հերթապահության կազմակերպում: Դասագրքերով և գրենական պիտույքներով ապահովվածության վիճակի ստուգում: Մասնակցություն դպրոցի փորձնականտարհանման աշխատանքներին: Դասարանի սոցիալապես անապահով երեխաների ցուցակի կազմում:
2.Աշխատանքային դաստիարակություն	Դասասենյակի կանաչապատում, ծաղիկների խնամք: Դասարանի սանիտարական վիճակի պահպանում, հերթապահություն դասարանում: Մասնակցություն բակի և դպրոցամերձ տարածքի մաքրման աշխատանքներին /շաբաթօրյակ/:	Դասասենյակի հիմնավոր մաքրում: Դասասենյակը նախապատրաստել ջեռուցման շրջանին / սեզոնին/: Ծաղիկների խնամք:

3.գնահատող-կողմնորոշող գործունեություն	<<Եկեք ծանոթանանք>>դաս./ժամ <<Աշնանային պարահանդես>>,- ստեղծագործում են երեխաները: <<Առողջության օր>>,-մեզ հյուր են եկել բժիշկները: <<Ովքեր են իմ ընկերները, ի՞նչն եմ կարևորում ընկերության մեջ>>դաս/ժամ:	Մասնակցություն <<Ուսուցչի օրը>>դպրոցում տոնակատարությանը: Կապակցված խոսքի զարգացում՝ <<Երջանիկ դիպված>> դաս/ժամ: <<Իմ աշակերտականսեղանի նոր ընկերը>>դաս/ժամ:
4.Անվտանգ երթևեկություն	<<Անվտանգ երթևեկության>>կանոնների հիշեցում: <<Անվտանգ երթևեկություն>> անկյան պատրաստում	<< Անվտանգ երթևեկության կանոններ>> տեսաֆիլմի դիտում:
5.Աշխատանք ծնողների հետ	Անհատական զրույց ծնողների հետ: Ծնողների ներգրավումը դաստիարակչական աշխատանքներում՝ ծնող-ուսուցող, ծնող-խորհրդատու:	1. Ծնողական ժողով՝ ա/<< Եկեք ծանոթանանք, ծնող, դասարանի ղեկավար, առարկայի ուսուցիչ>>: բ/<<Համագործակցություն դասավանդող ուսուցիչների հետ>>:
6.Առողջ ապրելակերպ	<<Քո առողջությունը. անձնական հիգիենա>> դաս./ժամ <<Կրակի հետ չի կարելիխաղալ>>-դաս/ժամ	<<Համակարգիչն ընկե՞ր է, թե՞ թշնամի>>դաս/ժամ: <<Ինչո՞ւ է անհրաժեշտ օդափոխել սենյակը>>դ/ժ
7.Ես քաղաքացին եմ Հայաստանի	1.<<Մենք՝մենք Հայկի թոռներն ենք>>դաս/ժամ	<<Մենք- մենք հայենք>> դ/ժ Էքսկուրսիա՝ <<Իմ ծննդավայրը>>:

Դասղեկի գործունեության ոլորտները	Նոյեմբեր	Դեկտեմբեր
1.Կազմակերպչական աշխատանք	Հերթապահությանկազմակերպում: Դպրոցական դասագրքերի և աշակերտական պիտույքների վիճակիստուգում:	Դասարանականակտիվի նիստ: Դասարանական անկյան ձևավորում:
2.Աշխատանքային դաստիարակություն	Հերթապահությունդասասենյակում: Ծաղիկների խնամք,նախապատրաստում ձմռանը:	Դասասենյակի հիմնավոր մաքրում: Հերթապահությունդասասենյակում: Դասասենյակի նախապատրաստումը՝ Նորտարվա:
3.Գնահատող-կողմնորոշող գործունեություն և ազատ շփում.	Մրցույթ-խաղ՝ <<Սպորտլանդիա>>: <<Մայրիկի օրը>> մերը նտանիքում: <<Սովորենք իրար հասկանալ>> դաս/ժամ: 4. <<Ո՞ր մասնագիտությունն է ինձ դուր գալիս և ինչո՞ւ>> դաս/ժամ:	Անվտանգ երթևեկության շաբաթի կազմակերպում: Նոր տարվա տոնակատարության նախապատրաստում: Պատի թերթի լույս ընծայում՝<<Ուրախ դիմավորենք Ամանորը>>: Դիմակահանդեսիկազմակերպում: <<Պահպանենք վարվեցողության կանոնները>>դաս/ժամ: <<Մեր ընտանի կենդանիները>> դաս/ժամ:
4.Անվտանգ երթևեկության կանոններ	1. Ուսուցողական խաղ՝<<Ճանապարհային երթևեկություն>>:	Ծանոթանանք՝ <<Ճանապարհային երթևեկության նշաններին>>:
5.Աշխատանք ծնողների հետ	Հանդիպում ռիսկայինխմբի երեխաների ծնողների հետ: Անհատական աշխատանք ծնողների հետ: Համադպրոցական ծնողական ժողով:	Առանձին զրույցծնողների հետ: Ծնողական ժողով՝<<Ինչո՞ւ են մեր երեխաները խաբում>>: Աշակերտների առաջադիմությանգնահատում:
6.Առողջ ապրելակերպ	Զրույց՝<<Գազը վտանգավոր կարող է լինել, երե չգիտես նրանիցօգտվելու կանոնները>> դաս/ժամ: Զրույց՝<<Սպորտը երեխայի կյանքում>>:	Զրույց՝<<Մենք առողջապրելակերպի կողմնակից ենք>>դաս/ժամ: Աշակերտներին նախապատրաստել ձմեռային արձակուրդներին:
7.Ես քաղաքացին եմ Հայաստանի	1.<<Մեր ազգայինհերոսները /Տիգրան Մեծ, Վարդան Մամիկոնյան/ >>դաս/ժամ:	1.Մեր խորհրդանիշներ՝դրոշ,զինանշան և հիմն: Դաս/ժամ

Դասղեկի գործունեության ոլորտները	Հունվար	Փետրվար
1.Կազմակերպչական աշխատանք	Դասագրքերի և աշակերտական պիտույքների վիճակի ստուգում: Դասարանական հերթապահության կազմակերպում:	Նիստ դասարանականակտիվի հետ: Հարստացնել դասարանական անկյունը:
2.Աշխատանքային դաստիարակություն	Դասգրքերի վերանորոգում: Հերթապահություն դասարանում:	Դասասենյակի հիմնավոր մաքրում: Հերթապահություն դասարանում:
3.Գիահատող-կողմնորոշող գործունեություն և ազատ շփում	<<Իրավունք և պարտականություն>>/դաս./ժամ: Լավագույն պաստառի ստեղծում՝<<Պայքարենք վտանգավոր սովորույթների դեմ>> Ձմեռային նկարների տոնավաճառ/ դպրոցականի անկյուն/:	Մասնակցություն՝ <<Ձմեռային խաղեր և ավանդական սովորույթներ>> միջոցառմանը: Դաս/ժամ՝<<Պահպանենք բնությունը- պահպանենք կյանքը>>:
4.Անվտանգ երթևեկության	Դաս/ժամ՝<< Երթևեկության անվտանգությունն են երազում աշխարհի մեծերն ու փոքրերը>>:	Երթևեկության կանոնները երեխաներիհիմբերով անցնելու դեպքում:
5.Աշխատանք ծնողների հետ	1. Անհատական աշխատանքծնողների հետ:	Ծնողական ժողով՝ ա/<<Վատ սովորույթներ, ինչպես պայքարել դրանցդեմ>>: բ/<<Հայրիկների դերը երեխաների դաստիարակության գործում>>:
6.Առողջ ապրելակերպ	Ճշգրիտ օգտվենք օրվա ռեժիմից:	Դաս-ժամ՝<<Օրվա ռեժիմը և առողջությունը>>:
7. Ես զինվորն եմ իմ հայրենիքի	1. Միջոցառում՝<<Ես զինվորնեմ իմ հայրենիքի>>-բանակի տոնին ընդառաջ:	<<Հայրենիքը սկսվում է իմ տնից>>դաս/ժամ:

Դասղեկի գործունեության ոլորտները	Մարտ	Ապրիլ
1.Կազմակերպչական աշխատանք	Դասագրքերի վիճակիստուգում:	Աշակերտների տետրերիվիճակի ստուգում:
2.Աշխատանքային դաստիարակություն	1.Դասասենյակի հիմնավորմաքրում: 2.Հերթապահություն դասասենյակում: 3.Զրույց՝<<Խնամքով օգտագուծենք դասագրքերը>>: 4.Հերթապահություն դասասենյակում:	Հերթապահություն դասասենյակում: Շաբաթօրյակ բակում և դպրոցամերձ տարածքում: Դասասենյակի կանաչապատում:
3.Գնահատող-կողմնորոշող գործունեություն և ազատ շփում.	Դաս/ժամ՝<<Ստուգաբանենք մեր դասարանի աղջիկների անունները>>: <<Պահպանենք բնությունը,պահպանենք կյանքը>> դաս/ժամ: Դաս/ժամ՝<<Օգնիր ընկերոջդ մեծահոգաբար>>:	Միջոցառում՝<< Մեր շրջապատի թռչունները>> /Թռչնի օր/: Դասղեկի ժամ՝<<Սիրելի գրքիէջերով>>: <<Ճանապարհորդություն արևավառ ծաղիկների աշխարհում>> դաս/ժամ:
4.Անվտանգ երթևեկության կանոններ	Ճանապարհի մարդիկ, մեքենաները, կանոններ:	Ժամանակակից տրանսպորտ-վտանգի մեծ և անկանխատեսելի աղբյուր:
5.Աշխատանք ծնողների հետ	Զրույց ռիսկային խմբի երեխաների ծնողների հետ: Անհատական աշխատանք ծնողների հետ: Տոնական հանդես՝ նվիրված մայրիկների տոնին:	Ծնողական ժողով՝<<Ընդլայնենք երեխաների հետաքրքրությունների շրջանակը>>:
6.Առողջ ապրելակերպ	Էքսկուրսիա	Էքսկուրսիա՝ <<Մեր շրջապատի բնության հրաշքները>>:
7.Ես քաղաքացին եմ Հայաստանի	Դաս/ժամ՝<<Մեր ընտանիքիբարոյախրատական դասերը>>:	1.Բանավեճ՝Պահպանենք բնությունը- պահպանենք առողջությունը>>:

Դասղեկի գործունեության ոլորտները	Մայիս
1.Կազմակերպչական աշխատանք	Դասագրքերը նախապատրաստել դպրոցի գրադարանին հանձնելու:
2.Աշխատանքային դաստիարակություն	Հերթապահություն դասարանում: Դասասենյակի հիմնավոր մաքրում: Մասնակցել դպրոցամերձ տարածքի բարեկարգման շաբաթօրյակին:
3.Գնահատող-կողմնորոշող գործունեություն և ազատ շփում.	Գթասրտության այցեր: Հանդիսավոր միջոցառում՝ <<Հայրենիքի նահատակներ, խոնարհվում ենք Ձեր առաջ>>:
4.Անվտանգ երթևեկության	Ժամանակակից տրանսպորտային վտանգի մեծ և անկանխատեսելի աղբյուրները:
5.Աշխատանք ծնողների հետ	Օգնություն ծնողներին՝<<Ամառային արձակուրդներին>>: Համատեղ ծնողական ժողով /ծնող, աշակերտ, ուսուցիչ/: Աշակերտների տարեկան առաջադիմության ամփոփում, շնորհակալագրերի և գովասանագրերի հանձնում:
6.Առողջ ապրելակերպ	Աշակերտներին նախապատրաստել ձմեռային արձակուրդներին:
7.Ես քաղաքացին եմ Հայաստանի	Միջոցառում՝<< Աշխարհի յոթ հրաշալիքները>>

Դասղեկի ժամերի թեմատիկա
VII դասարան
I կիսամյակ

1. Նոր ուստարի, նոր ակնկալիքներ
2. Աշակերտական ինքնավարություն
3. Ես անկախ Հայաստանի քաղաքացի եմ
4. Ուսուցիչն իմ կյանքում
5. Ինչ ընդհանուր բաներ ունենք
6. Ես սիրում եմ իմ գյուղը

7. Ինչ է կոնֆլիկտը: Կոնֆլիկտի առաջացման պատճառները
8. Կոնֆլիկտի կառուցվածքը: Կոնֆլիկտի զարգացման փուլերը
9. Վարվելակերպի ոճերը կոնֆլիկտային իրավիճակներում: Կոնֆլիկտների լուծման հնարավոր ելքերը
10. Կոնֆլիկտների լուծման եղանակները: Կոնֆլիկտների խաղաղ լուծման պատվիրանները
11. Ինքնաճանաչում, ինքնարժևորում:
12. Պարտականություններ և պատասխանատվություն
13. Լինենք քաղաքակիրթ
14. Ընկերասիրություն
15. Ամանորին ընդառաջ

II կիսամյակ

1. Լինենք հարգալից
2. Օրը սկսենք <<բարև>>-ով
3. Հայոց հզոր բանակ
4. Ակտիվ լսելու դերը համագործակցության մեջ
5. Որոշումների կայացում
6. Թիմային աշխատանք
7. Անաղարտ պահենք հայոց լեզուն
8. Վստահության դերը թիմային աշխատանքում
9. Պահպանենք բնությունը
10. Գարունը և մայրիկս
11. Եթե ես լինեի…
12. Պատմական ակնարկ
13. Երբ հատակը փախչում է ոտքերի տակից
14. Բնական գազ
15. Տանը մենակ եմ
16. Տնային քիմիայի դաս
17. Տնային ֆիզիկայի դաս
18. Ամանորյա տոնածառը
19. Դրսում արդեն մթնել է

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

1. Անցկացնե՞ դասղեկի ժամ, ՞նտրե՞ դասարանական խորհո՞րդ՝ բաղկացած 5 հոգո՞ց, քննարկե՞ և հստակ ձևակերպե՞ դասարանային կանոններ :
***2.* Փոքրիկ զրո՞յց «Սեպտեմբերի 21-՞ մեր անկախո՞թյան օրն է» թեմայով:**
3. ՞աճախակի կազմակերպե՞ զրո՞յցներ թագավարակից պաշտպանվե՞ո՞ կանոններ՞ պահպանե՞ո՞ վերաբերյա՞: 4.

՞րո՞յց «44-օրյա պատերազմի մերօրյա հերոսներ» թեմայով:

5. ՞անձնարարե՞ անգիր սովորե՞ հայրենասիրական երգեր և բանաստեղծո՞թյո՞ններ:

6. Աշակերտների սանիտարական վիճակի պարբերական ստո՞գո՞մներ:

7. Բժշկական մատչե՞ի զրո՞յց « Մաքրո՞թյո՞նից է ծնվո՞մ առողջո՞թյո՞ն՞» թեմայով:

8. ՞րո՞յց «Կարգապահո՞թյո՞ն՞ նպաստո՞մ է ո՞սման առաջադիմո՞թյան բարձրացման՞» թեմայով:

9. Պարբերաբար կարդա՞ հատվածներ «Մանկական Աստվածաշնչից»: Ո՞շադրո՞թյո՞ն հրավիրե՞ բարո՞թյո՞ն և ներողամտո՞թյո՞ն դաստիարակող հատվածներին»:

10. ՞րո՞յց «Տիրապետո՞՞մ ենք մենք վարվեցողո՞թյան ճիշտ կանոններին» թեմայով:

11. Ապրի՞ի 7-՞ մայրո՞թյան և գեղեցկո՞թյան օրն է: Որտեղի՞ց են գա՞իս տոնի արմատներ՞:

12. ՞արգանքի տո՞րք և մոմավառո՞թյո՞ն՝ ցեղասպանո՞թյան զոհերի հիշատակին:

13. Ստո՞գե՞ դասագրքերի պահպանո՞թյան վիճակ՞: Կարգի բերե՞ դրանք՝ գրադարան վերադարձնե՞ո՞ համար:

14. ՞աճախակի կազմակերպե՞ էքսկո՞րսիաներ բնո՞թյան գրկո՞մ, արշավ մոտակա անտառ: ՞րո՞ցե՞ «Ճի՞շտ ենք վարվո՞մ բնո՞թյան հետ» թեմայով:

15. Արցախյան պատերազմների հերոսներ՞....: Ինչի՞ է պատրաստ մարդ՞ հանո՞ն իր հայրենիքի:
16. ՞րո՞յց «՞ամացանց. վտանգներ և առավե՞ո՞թյո՞ններ» թեմայով

17. Մայիս՝ հաղթանակների ամիս / Աշակերտների և ծնողների հետ վերհիշե՞ Մեծ հայրենական , Արցախյան , քառօրյա և 44-օրյա պատերազմների մասնակից հարազատների կենսագրո՞թյո՞ններ՞:

18. Ո՞սո՞մնական տարվա ամփոփո՞մ « Ի՞նչ եմ տանո՞մ այս տարի ինձ հետ դպրոցից» թեմայով քննարկո՞մ: / Նպատակ՞՝ Երեխաներ՞ ամփոփո՞մ են ո՞սո՞մնական տարին, նշո՞մ են անցնող ո՞սո՞մնական տարվա ձեռքբերո՞մներ՞, հետաքրքիր պահեր՞ և դպրոցի դեր՞ դրանց մեջ:/

19. Քննարկում (Ինչ է COVID-19-ը, կանխարգելում , պաշտպանություն:)

Դաստիարակչական աշխատանքի /ուսումնական տարվա/ պլան

	Գործունեության ուղղությունները					
	Ճանաչողա - տեղեկատվական	Գեղագիտական	Սպորտային- առողջարական	Աշխատանքային	Քաղաքացիական, հայրենասիրական	Ինքնակառավարում
Սեպտեմբեր	Շրջապատող աշխարհի վերաբերյալ պատկերացման հարստացում, աշխհար-հայացքի ընդլայնման պահանջի զարգացում, բնապահպանություն	Գեղեցիկը ընկալելու և տեսնելու զգայական ոլորտի դաստիա-րակում	Առողջ ապրելակերպի, աշակերտների առողջության պաշտպանության, պահպանման և ամրապնդման քարոզում	Աշխատանքի և ստեղծվող նյութական արժեքների հանդեպ հարգանքի ձևավորում	Քաղաքացիական դիրքորոշման, հայրենիքի և հարազատ գյուղի ճակատագրի հանդեպ համամասնակցության զգացում սերմանելու ձևավորում	Դասարանում աշակերտական ինքնավարության զարգացում

Աշխատանք ծնողների հետ			
1.	Անհատական զրույց ծնողների հետ	Դասղեկ	Ուս-տարվա ընթացքում
2.	Ծնողների ներգրավվածությունը	Դասղեկ	Ուս-տարվա ընթացքում

Digitally signed by KYUREGHYAN ANAHIT
5101840181